# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2011 թվականի N 1797-Ն

## ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ (ԿՈՉՈՒՄՆԵՐԻ) ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Սահմանել հանրային ծառայության առանձին տեսակների դասային աստիճանների (կոչումների) համապատասխանությունը` համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի «Հայաստանի փրկարար ծառայությունում կամ այլ պետական մարմիններում ծառայություն անցնող (անցած) և զինվորական կամ այլ հատուկ կոչում ունեցող քաղաքացիների կոչումների համապատասխությունը սահմանելու մասին» N 319-Ն որոշումը, 2007 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատողների դասային աստիճանները Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինվորական կոչումներին համապատասխանեցնելու ցանկը սահմանելու մասին» N 1376-Ն որոշումը, 2008 թվականի մարտի 20-ի «Ոստիկանության ծառայողների պաշտոնների խմբերի և քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների խմբերի համապատասխանությունը սահմանելու մասին» N 254-Ն որոշումը, 2008 թվականի մարտի 6-ի «Հատուկ քննչական ծառայության դասային աստիճաններին այլ պետական մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի) համապատասխանությունը սահմանելու մասին» N 244-Ն որոշումը, 2008 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության դասային աստիճաններին այլ պետական մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի) համապատասխանությունը սահմանելու մասին» N 1203-Ն որոշումը, 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում շնորհված զինվորական կոչումների, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կոչումները, դատախազության դասային աստիճանները, ինչպես նաև պահեստազորում ունեցած կոչումները ոստիկանության կոչումներին համապատասխանեցնելու մասին» N 1501-Ն որոշումը, 2010 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական ծառայողների դասային աստիճանների համապատասխանությունը քրեակատարողական ծառայության կոչումներին, ինչպես նաև դրանք շնորհելու կարգը և պայմանները սահմանելու մասին» N 530-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և դրանով հաստատված N 1 հավելվածը[ուղղ:], 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում քաղաքացիական ծառայողների դասային աստիճանների համապատասխանությունը ոստիկանության կոչումներին, ինչպես նաև դրանք շնորհելու կարգը

և պայմանները սահմանելու մասին» N 991-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և դրանով հաստատված N 1 հավելվածը[ուղղ]:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ** **Տ. Սարգսյան**

2011 թ. դեկտեմբերի 21
Երևան

**Հավելված**
**ՀՀ կառավարության 2011 թվականի**
**դեկտեմբերի 15-ի N 1797-Ն որոշման**

## ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ (ԿՈՉՈՒՄՆԵՐԻ) ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

| ՀՀ արդարադատության նախարարությունում շնորհվող դասային կոչումներ | ՀՀ դատախազությունում շնորհվող դասային կոչումներ | ՀՀ սահմանադրական դատարանում շնորհվող դասային աստիճաններ | ՀՀ Ազգային ժողովում շնորհվող պետական ծառայության դասային աստիճաններ | Համայնքային ծառայության դասային աստիճաններ | ՀՀ դիվանագիտական ծառայության դասային աստիճաններ | Քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ | Քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճաններ | Դատական ծառայության դասային աստիճաններ | ՀՀ զինված ուժերում շնորհվող կոչումներ | ՀՀ ոստիկանության կոչումներ | ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությունում շնորհվող կոչումներ | ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում շնորհվող կոչումներ | ՀՀ մաքսային ծառայությունում շնորհվող հատուկ կոչումներ | ՀՀ հարկային ծառայությունում շնորհվող կոչումներ | Հատուկ քննչական ծառայության դասային աստիճաններ | Դ… ծառ… թյու… շնոր… կոչ… |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական | արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական | արդարադատության 1-ին դասի պետական խորհրդական | պետական ծառայության 1-ին դասի պետական խորհրդական | | արտակարգ և լիազոր դեսպան | քաղաքացիական ծառայության 1-ին դասի պետական խորհրդական | քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին դասի պետական խորհրդական | դատական ծառայության 1-ին դասի բարձրագույն խորհրդական | գեներալ-լեյտենանտ | ոստիկանության գեներալ-լեյտենանտ | փրկարարական ծառայության գեներալ-լեյտենանտ | գեներալ-լեյտենանտ | մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտ | հարկային ծառայության պետական խորհրդական | | |
| արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական | արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական | արդարադատության 2-րդ դասի պետական խորհրդական | պետական ծառայության 2-րդ դասի պետական խորհրդական | | արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար | քաղաքացիական ծառայության 2-րդ դասի պետական խորհրդական | քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի պետական խորհրդական | դատական ծառայության 2-րդ դասի բարձրագույն խորհրդական | գեներալ-մայոր | ոստիկանության գեներալ-մայոր | փրկարարական ծառայության գեներալ-մայոր | գեներալ-մայոր | մաքսային ծառայության գեներալ-մայոր | հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդական | արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական | արդ… դա… թ… գեն… մ… |
| արդարադատության առաջին դասի | արդարադատության առաջին դասի | արդարադատության 1-ին դասի խոր- | պետական ծառայության 1-ին | համայնքային ծառայության 1-ին | առաջին դասի խորհրդական | քաղաքացիական ծառայության | քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին | դատական ծառայության 1-ին | գնդապետ | ոստիկանության գնդապետ | փրկարարական ծառայության | գնդապետ | մաքսային ծառայության գնդա- | հարկային ծառայության առա- | արդարադատության 1-ին դասի | արդ… դա… թ… գն… պ… |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| խորհրդական | խորհրդական | հրդական | դասի խորհրդական | դասի խորհրդական | | 1-ին դասի խորհրդական | դասի խորհրդական | դասի խորհրդական | | | գնդապետ | | պետ | ջին դասի ավագ խորհրդական | խորհրդական | |
| արդարադատության երկրորդ դասի խորհրդական | արդարադատության երկրորդ դասի խորհրդական | արդարադատության 2-րդ դասի խորհրդական | պետական ծառայության 2-րդ դասի խորհրդական | համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդական | երկրորդ դասի խորհրդական | քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդական | քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի խորհրդական | դատական ծառայության 2-րդ դասի խորհրդական | փոխգնդապետ | ոստիկանության փոխգնդապետ | փրկարարական ծառայության փոխգնդապետ | փոխգնդապետ | մաքսային ծառայության փոխգնդապետ | հարկային ծառայության երկրորդ դասի ավագ խորհրդական | արդարադատության 2-րդ դասի խորհրդական | ար րա տու փ գն պ |
| արդարադատության երրորդ դասի խորհրդական | արդարադատության երրորդ դասի խորհրդական | | պետական ծառայության 3-րդ դասի խորհրդական | համայնքային ծառայության 3-րդ դասի խորհրդական | | քաղաքացիական ծառայության 3-րդ դասի խորհրդական | քաղաքացիական հատուկ ծառայության 3-րդ դասի խորհրդական | | մայոր | ոստիկանության մայոր | փրկարարական ծառայության մայոր | մայոր | մաքսային ծառայության մայոր | հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդական | արդարադատության 3-րդ դասի խորհրդական | արդ դա թ մա |
| առաջին դասի իրավաբան | առաջին դասի իրավաբան | դատական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայող | պետական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայող | համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայող | առաջին դասի առաջին քարտուղար | քաղաքացիական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայող | քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին դասի առաջատար ծառայող | դատական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայող | կապիտան | ոստիկանության կապիտան | փրկարարական ծառայության կապիտան | կապիտան | մաքսային ծառայության կապիտան | հարկային ծառայության առաջին դասի խորհրդական | 1-ին դասի խորհրդական | ար ր դա թ կա տ |
| երկրորդ դասի իրավաբան | երկրորդ դասի իրավաբան | դատական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայող | պետական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայող | համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայող | երկրորդ դասի առաջին քարտուղար | քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայող | քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայող | դատական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայող | ավագ լեյտենանտ | ոստիկանության ավագ լեյտենանտ | փրկարարական ծառայության ավագ լեյտենանտ | ավագ լեյտենանտ | մաքսային ծառայության ավագ լեյտենանտ | հարկային ծառայության երկրորդ դասի խորհրդական | 2-րդ դասի խորհրդական | ար ր դա թ ա լե նա |
| երրորդ դասի իրավաբան | երրորդ դասի իրավաբան | | պետական ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայող | համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայող | | քաղաքացիական ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայող | քաղաքացիական հատուկ ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայող | | լեյտենանտ | ոստիկանության լեյտենանտ | փրկարարական ծառայության լեյտենանտ | լեյտենանտ | մաքսային ծառայության լեյտենանտ | հարկային ծառայության երրորդ դասի խորհրդական | 3-րդ դասի խորհրդական | ար րա տ թ լե նա |
| | | դատական ծառայության 1-ին դասի | պետական ծառայության 1-ին | համայնքային ծառայության 1-ին | առաջին դասի երկրորդ քարտուղար | քաղաքացիական ծառայության 1- | քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին | դատական ծառայության 1-ին | | ոստիկանության կրտսեր լեյտե- | | | մաքսային ծառայության կրտսեր լեյտե- | | | |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ծառայող | դասի կրտսեր ծառայող | դասի կրտսեր ծառայող | | ին դասի կրտսեր ծառայող | դասի կրտսեր ծառայող | դասի կրտսեր ծառայող | | նանտ | | | նանտ | | | |
| | | դատական ծառայության 2-րդ դասի ծառայող | պետական ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայող | համայնքային ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայող | երկրորդ դասի երկրորդ քարտուղար | քաղաքացիական ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայող | քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայող | դատական ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայող | ավագ ենթասպա | ոստիկանության ավագ ենթասպա | փրկարարական ծառայության ավագ ենթասպա | ավագ ենթասպա | | | | |
| | | | պետական ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայող | համայնքային ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայող | երրորդ քարտուղար | քաղաքացիական ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայող | քաղաքացիական հատուկ ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայող | | ենթասպա | ոստիկանության ենթասպա | փրկարարական ծառայության ենթասպա | ենթասպա | | | | |
| | | | | | կցորդ | | | | ավագ | ոստիկանության ավագ | փրկարարական ծառայության ավագ | | | | | |
| | | | | | | | | | ավագ սերժանտ | ոստիկանության ավագ սերժանտ | փրկարարական ծառայության ավագ սերժանտ | | | | | |
| | | | | | | | | | սերժանտ | ոստիկանության սերժանտ | փրկարարական ծառայության սերժանտ | | | | | |
| | | | | | | | | | կրտսեր սերժանտ | ոստիկանության կրտսեր սերժանտ | փրկարարական ծառայության կրտսեր սերժանտ | | | | | |
| | | | | | | | | | եֆրեյտոր | | | | | | | |
| | | | | | | | | | շարքային | | փրկարարական ծառայության շարքային | | | | | |

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան